

ՓՈՒՆԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

վայրը _____ « _____ » _____ թ.

կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Կողմ-1», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մի կողմից, և _____
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Կողմ-2», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Կողմ-1-ը պարտավորվում է Կողմ-2-ին հանձնել սույն պայմանագրի 1.2 կետում նշված ապրանքը, իսկ Կողմ-2-ը պարտավորվում է Կողմ-1-ին հանձնել 1.3 կետում նշված ապրանքը:

1.2. Կողմ-1-ը հանձնում է _____
ապրանքի անվանումը, քանակը
որի սեփականատերն է ինքը, ինչը հաստատվում է _____
: _____
փաստաթղթի անվանումը

1.3. Կողմ-2-ը հանձնում է _____
ապրանքի անվանումը, քանակը
որի սեփականատերն է ինքը, ինչը հաստատվում է _____
: _____
փաստաթղթի անվանումը

1.4. Սույն պայմանագրի 1.3 կետում նշված փոխանակման ենթակա ապրանքները համարժեք են:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Ապրանքները հանձնվում են միաժամանակ՝ « _____ » _____ թ.:

2.2. Ապրանքների հանձնման վայրը _____
հանձնման վայրի հասցեն

2.3. Սույն պայմանագրի 1.2 և 1.3 կետերում նշված փոխանակման ենթակա ապրանքները հանձնելու և ընդունելու հետ կապված ծախսերը կողմերի միջև բաշխվում են հավասարաչափ:

2.4. Ապրանքների նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվում է կողմերից յուրաքանչյուրին՝ ապրանքը մյուս կողմին հանձնելու պահից:

3. Հաշվարկների իրականացման կարգը

3.1. Սույն պայմանագրով կողմերի միջև դրամային արտահայտությամբ հաշվարկներ չեն իրականացվում:

3.2. Սույն պայմանագրով գործառնությունների հաշվառում իրականացնելու նպատակով ապրանքների արժեքը կազմում է՝
ա) ըստ հավելված 1-ի՝ _____ (_____) դրամ, ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը.
բ) ըստ հավելված 2-ի՝ _____ (_____) դրամ, ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում մեղավոր կողմը մյուս կողմին վճարում է տուգանք՝ պայմանագրի գնի _____ տոկոսի չափով, և կետանցի յուրաքանչյուր օրվա համար տույժ՝ պայմանագրի գնի _____ տոկոսի չափով:

4.2. Տուգանքի (տուգանքի կամ տույժի) վճարումը կողմերին չի ազատում իրենց պարտավորությունների կատարումից:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև _____:

7.2. Սույն պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումները կատարվում են գրավոր և ստորագրվում կողմերի լիազորված ներկայացուցիչների կողմից: Սույն պայմանագրի հավելվածները դրա անբաժանելի մասն են:

7.3. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8. Կողմերի հասցեները, վավերապայմանները և ստորագրությունները

Կողմ -1

ստորագրություն

Կողմ- 2

ստորագրություն